Ռ-84

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔՈՍՅԱՆ ԱՐԱՄ ՎԱՂԱՐՇԱԿԻ

Մ.Թ.Ա. XII ԴԱՐԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Է.00.02

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 1997

Ռ-84

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔՈՍՅԱՆ ԱՐԱՄ ՎԱՂԱՐՇԱԿԻ

Մ.Թ.Ա. XII ԴԱՐԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Է.00.02

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 1997

Աշխատանքը պատրաստվել է
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր
Գ.Խ.ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ն.Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ս.Ա.ԵՍԱՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ:

Հրապարակային պաշտպանությունը տեղի կունենա
1997թ. 6 հոկտեմբերի ին ժամը 14 ին
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական
աստիճաններ շնորհող պատմության բնագավառի 006
Մասնագիտական Խորհրդի նիստում

(հասցեն՝ Երևան, Մարշալ Բաղրամյան պող.24գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 1997 թ. 6 հոկտեմբերի ին:

Մասնագիտական Խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների դոկտոր
Ա.Ա.ԽԱՌԱՏՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Մ.թ.ա. XIII դարի վերջերին - XII դարում Մերձավոր Արևելքի և էգեյան ծովի ավազանի բոլոր երկրները քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային խոր ճգնաժամ ապրեցին, որի հետևանքը այս ընդարձակ տարածաշրջանի պետությունների և մանր քաղաքական միավորների վայրընթաց զարգացումն էր, որը մի շարք դեպքերում ավարտվեց դրանց անկումով: «Մ.թ.ա. XII դարի ճգնաժամ» կոչվող այս երևույթը անցումային փուլ էր հինարևելյան պատմամշակութային աշխարհի զարգացման պրոցեսում: Ճգնաժամի ծավալման արդյունքում տեղի ունեցան արմատական փոփոխություններ: Էականորեն փոխվեց Մերձավոր Արևելքի հասարակությունների էթնոքաղաքական և սոցիալ-տնտեսական բնութագիրը: Ուշբրոնզեդարյան հասարակությունների առայժմ դժվար բացատրելի անկումը, շուրջ երեք դար տևած աստիճանական վերականգնումը համակողմանի բացատրության կարիք ունի: Դատելով առկա գրավոր և հնագիտական աղբյուրներից, XII դարի ճգնաժամը չի շրջանցել նաև Հայկական լեռնաշխարհը: Ինչպես և ամենուրեք, այստեղի պետական կազմավորումները նույնպես ապրել են համատարած վայրընթաց զարգացման փուլ:

Ատենախոսությունը նվիրված է մերձավորարևելյան ճգնաժամի էթնոքաղաքական ասպեկտի բացահայտմանը իր սկզբնավորման փուլից մինչև մ.թ.ա. XI-X դդ. սահմանագլուխը, երբ նկատվում է քաղաքական միավորների կենսագործունեության աստիճանական կայունացում: Աշխատության մեջ շեշտը դրվում է սկզբնաղբյուրներով առավել լավ վկայված ճգնաժամային գոտիների՝ Փոքր Ասիայի, միկենյան աշխարհի, սիրիա-պաղեստինյան տարածաշրջանի և Հայկական

լեռնաշխարհի պատմության խնդիրների վրա:

Ատենախոսության թեմայի շուրջ մասնագիտական գրականության մեջ առայժմ հիմնականում քննարկվել են առանձին երկրներում ծավալված ճգնաժամային երևույթները, գլխավորապես՝ էթնիկական տեղաշարժերը և քաղաքական միավորների անկման հնարավոր պատճառները: Այդ երևույթների համալիր ուսումնասիրությունը թույլ է տալիս XII դարի ճգնաժամը դիտել որպես ուշբրոնզեդարյան Մերձավոր Արևելքն ու էգեյան ծովի ավազանն ընդգրկած պատմական մի ընդհանուր պրոցեսի առանձին դրսևորումների միասնություն՝ պատճառների, զարգացման և հետևանքների տեսանկյունից:

Ատենախոսության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա են Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի (Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազաններ) համաժամանակյա պատմության տարբեր խնդիրներ՝ էթնիկական տեղաշարժերը, մուշկերի պրոբլեմը և այլն:

<u>Աշխատանքի նպատակը և խնդիրները.</u> Ատենախոսության հիմնական նպատակները երկուսն են. 1) մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամի ընթացքում Առաջավոր Ասիայի և էգեյան ծովի ավազանի հասարակությունների զարգացման հիմնական օրինաչափությունների ուսումնասիրում, 2) ճգնաժամի փուլում Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի քաղաքական միավորների զարգացման առանձնահատկությունների լուսաբանում: Հետազոտվող խնդիրների շարքում առաջնային նշանակություն ունեն՝ ճգնաժամի ծավալման շրջանում ուսումնասիրվող տարածաշրջանի զարգացման ընդհանուր օրինաչափությունների վերհանումը, Խեթական տերության անկման խնդրի նոր «տրոհման» տեսության խորացված քննությունը, էթնիկական

տեղաշարժերի բնույթի բացահայտումը, մուշկերի խնդրի նոր մեկնաբանության հիմնավորումը և այլն:

<u>Ատենախոսության ժամանակագրական շրջանակները</u> ընդգրկում են մ.թ.ա. XIII դարի կեսերից մինչև մոտավորապես XI դարի վերջերը - X դարի սկիզբը ընկած ժամանակահատվածը: Այս ժամանակաշրջանը հայտնի է որպես ուշբրոնզեդարյան հասարակությունների անկման և նոր՝ վաղ երկաթեդարյան փուլի ձևավորման շրջան: Մ.թ.ա. XIII դարի կեսերից Առաջավոր Ասիայի և էգեիդայի քաղաքական-մշակութային կենտրոններում սկսված համանման ճգնաժամային պրոցեսները XII դարում հանգեցրին ուշբրոնզեդարյան քաղաքակրթությունների համընդհանուր վայրէջքին, որի ընթացքում պատմության ասպարեզից հեռացան մի շարք քաղաքական միավորներ (Խեթական տերություն, միկենյան պետություններ, Ուգարիտ, Ամուրրու, Իսուվա և այլն): Ճգնաժամային երևույթները շարունակվեցին նաև հաջորդ՝ XI դարում, որից հետո սկսվում է աստիճանական վերականգնման փուլը:

<u>Ատենախոսության գիտական նորույթը</u> Առաջավոր Ասիայի և էգեյան ծովի ավազանի հասարակությունների՝ մ.թ.ա. XIII-XI/X դարերի էթնոքաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման օրինաչափությունների համալիր ուսումնասիրությունն է: Այն իրականացվում է գրավոր, հնագիտական և հնակլիմայաբանական աղբյուրների և նյութերի համատեղ հետազոտության հիման վրա: Առաջարկվում են ուսումնասիրվող տարածաշրջանի պատմությանը վերաբերող մի շարք նոր մեկնաբանություններ:

Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը ուսումնասիրվում է մինչճգնաժամ-ճգնաժամ-ետճգնաժամ

եռմիասնության մեջ, ինչպես առանձին տարածաշրջաններում, այնպես էլ իր ամբողջության մեջ, որպես համընդհանուր օբյեկտիվ պատմական պրոցես: Առանձնացվում են այս շուրջ երկդարյա ժամանակահատվածի հիմնական փուլերը 1) հասարակությունների քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմքերի խարխլում և ապակայունացում, 2) պետությունների քաղաքական կառույցի տրոհում գերազանցապես ներքին օբյեկտիվ պատճառների ներգործության հետևանքով. ուղեկցող երևույթներն են բնակչության շարժունակության աճը, քաղաքային մշակույթի անկումը, տնտեսական մեխանիզմի փլուզումը; 3) Մերձավոր Արևելքի և էգեիդայի էթնոքաղաքական քարտեզի վերաձևում. մի շարք պետությունների անկում, փոխարենը նոր քաղաքական միավորների կազմավորում:

Ատենախոսության հիմնական նորույթներից է մ.թ.ա. XII դարի էթնիկական տեղաշարժերի բնույթի, դրանց կրողների և հետևանքների մասին նախկինում գոյություն ունեցող պատկերացումների վերագնահատումը: Առկա սկզբնաղբյուրների ընձեռած նյութի հիման վրա առաջ է քաշվում այն տեսակետը, ըստ որի էթնիկական տեղաշարժերը ոչ թե ճգնաժամի հիմնական հարուցիչներն էին, այլ դրա հետևանքը: Ընդ որում տեղաշարժերին հիմնականում մասնակցում էր վայրընթաց զարգացում ապրող պետությունների քաղաքային բնակչությունը: Էթնիկական տեղաշարժերի կրողների կողմից քաղաքային կենտրոնների ոչնչացման մասին նախկինում գերիշխող տեսակետը ներկայումս քննադատության չի դիմանում:

Ատենախոսության կարևոր նորույթներից է Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում գրավոր աղբյուրներով հիշատակվող մուշկերի և մյուս էթնիկական խմբերի Հյուսիսային Բալկաններից XII դարի սկզբներին Փոքր Ասիա ներթափանցած Եվրոպական թրակա-փռյուգական ցեղերի հետ ենթադրվող կապի

ժխտումը: Վերինեփրատյան մուշկերը ակնհայտորեն Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան բնակչության մի հատվածն են եղել, որոնք ճգնաժամի փուլում մասնակի տեղաշարժեր են կատարել նախ դեպի Իսուվա, Ալզի, այնուհետև հարավ՝ Կադմուխի: Այս մուշկերի ելակետը պիտի գտնվեր Եփրատի ակունքների շրջանում՝ խեթական աղբյուրների հիշատակած Հայասայի տարածքում կամ հարևանությամբ:

Ատենախոսության մեջ որոշակիորեն վերանայվել են Մերձավոր Արևելքի և էգեիդայի մ.թ.ա. XIII-X դարերի պատմության բազմաթիվ մասնավոր հարցեր:

<u>Ատենախոսության աղբյուրները և գրականությունը.</u> Ատենախոսության հիմնական աղբյուրագիտական հիմքը մ.թ.ա.II-I հազարամյակների հինարևելյան սեպագիր և հիերոգլիֆային արձանագրություններն են (խեթական, ասորեստանյան, ուրարտական սեպագիր, փոքրասիական և եգիպտական հիերոգլիֆային), անտիկ հեղինակների երկերը: Աշխատության ժամանակագրական և աշխարհագրական շրջանակներից ելնելով, լայնորեն օգտագործված են հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև հնակլիմայաբանական հետազոտությունների տվյալները: Գործնականում, ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների ուսումնասիրությունը ընթանում է գրավոր և հնագիտական աղբյուրների զուգահեռ հետազոտության միջոցով, որը նպաստում է դրանց համակողմանի լուսաբանմանը:

Ատենախոսության մեջ օգտագործված է թեմային առնչվող բազմալեզու մասնագիտական գրականություն, հրատարակված ընդհուպ մինչև 1990-ական թվականների կեսերը:

<u>Ատենախոսության քննարկումը և պաշտոնական</u>

հավանությունը.

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Սեպագրական քաղաքակրթությունների բաժնում: Թեմայի գծով հրատարակվել է երկու մենագրություն և յոթ հոդված Հայաստանում և արտասահմանում: Հայցորդը ատենախոսության առանձին դրույթների և բաժինների շուրջ զեկուցումներով հանդես է եկել Հայաստանում և արտասահմանում կազմակերպված մի շարք գիտաժողովներում (Երևան, Սանկտ-Պետերբուրգ, Պոզնան, Լոնդոն, Քլիվլենդ):

Աշխատանքի կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում ներկայացված են թեմայի արդիականությունը, աշխարհագրական և ժամանակագրական շրջանակները, լուսաբանված են խնդրի ուսումնասիրման վիճակը և հեռանկարները: Պարզաբանված են ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը:

ԳԼՈՒԽ I

«ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ ԵՎ ԷԳԵՅԱՆ ԾՈՎԻ ԱՎԱՋԱՆԸ Մ.Թ.Ա. XIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ»:

Առաջին գլուխը բաղկացած է հինգ բաժիններից և եզրակացությունից:

Առաջին բաժնում («Միջազգային իրադրությունը») ներկայացվում են XIII դարի երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում տիրող աշխարհաքաղաքական իրավիճակը և և առաջատար պետությունների՝ Խեթական տերության, Ասորեստանի, Եգիպտոսի, Ախխիյավայի և Բաբելոնիայի փոխհարաբերությունների բնույթը և զարգացման միտումները: Մ.թ.ա. 1258թ. խեթա-եգիպտական դաշնագիրը նշանավորեց մերձավորարևելյան քաղաքական կյանքում ուժերի հարաբերակցության մի նոր փուլ, այն է, նախկին հակառակորդների՝ Խաթթիի և Եգիպտոսի մերձեցումը, որ կարևոր նշանակություն ունեցավ այս տարածաշրջանի հետագա պատմության համար: XIII դարի կեսերին մերձավորարևելյան պետությունների արտաքին քաղաքականության մեջ պարզորոշ գծագրվում էր երկու միտում՝ 1) գոյություն ունեցող վարչա-քաղաքական իրավիճակի պահպանում, փաստական հրաժարում տարածքային զավթումներից (Եգիպտոս և Խաթթի), 2) ագրեսիվ արտաքին քաղաքականություն նոր տարածքների և ազդեցության ոլորտների ընդարձակման նպատակով (Ասորեստան և Ախխիյավա): XIII դարի 50-30-ական թվականները բնութագրվում են վերոհիշյալ միտումների տևական բախումներով, որը, սակայն, աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների չհանգեցրեց: Հյուսիսային Միջագետքում և դրա մատույցներում Ասորեստանի

ունեցած որոշ հաջողությունները անցողիկ էին: Արդեն դարավերջին խեթա-ասորեստանյան հակամարտությունը ավարտվել էր: Լարվածության մյուս շրջանում արևմտյան Փոքր Ասիայում Ախխիյավայի կողմից հովանավորվող անջատողական ուժերի գործունեությունը հիմնականում ճնշվեց Թուդխալիյաս IV-ի կողմից. այս շրջանում Ախխիյավան այլևս իրենից քաղաքական լուրջ գործոն չէր կարող ներկայացնել:

Երկրորդ բաժնում («Խեթական տերությունը մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին») ուսումնասիրվում է Խաթթիի արտաքին և ներքաղաքական պատմությունը նրա վերջին արքաների կառավարման շրջանում:

Թուդխալիյաս IV-ի (1240-1220-ական թվականներ) կառավարման տարիները հագեցած էին ներքաղաքական և արտաքին քաղաքական մի շարք լուրջ խնդիրներով: Դրանցից Տերության տարածքային ամբողջականության համար առանձնակի սպառնալիք էր պարունակում դեռ Խաթթուսիլիս III-ի կողմից հարավային Փոքր Ասիայում ստեղծված Թարխունտասսա քույր-պետությունը, որը կառավարվում էր Սուվատալլիս II-ի ժառանգների կողմից: Թուդխալիյասի և Թարխունտասսայի արքա Կուրունտայի միջև 1240-ական թվականների վերջերին կնքված պայմանագիրը («Բրոնզե տախտակ») երկար չգոյատևեց: Շուտով բռնկված քաղաքացիական պատերազմի սկզբում խեթերի մայրաքաղաք Խաթթուսասը գրավվեց Կուրունտայի կողմից և, չնայած Թուդխալիյասը կարողացավ վերանվաճել այն, սակայն այս ապստամբությունը ծանր հետևանքներ ունեցավ Խեթական տերության համար: Պատերազմի ընթացքում մի շարք կախյալ երկրներում (Փոքր Ասիայի արևմուտքում և արևելքում, նաև Ալասիա-Կիպրոսում) խորացան մշտապես առկա անջատողական միտումները: Թուդխալիյասի կառավարման ողջ հետագա շրջանը

նվիրված էր երկրի տարածքային ամբողջականության և ազդեցության գոտիների վերականգնմանը:

Մ.թ.ա. 1234/3թ. Նիխրիյայի ճակատամարտից հետո խեթերի վերահսկողության տակից դուրս եկավ կախյալ Միտաննի-Խանիգալբատը և նրանց դիրքերը սասանվեցին վերին Եփրատյան շրջանում (Իսուվա): Արևմտյան Փոքր Ասիայում Թուդխալիյասը մեծ ջանքերի գնով կարողացավ հաջողության հասնել Ախխիյավայի (միկենյան Հունաստան) կողմից հովանավորվող երկրների դեմ սկսված պատերազմում: Խեթերը գրավեցին Ախխիյավայի գլխավոր հենակետ Միլլավանդան, այստեղ հաստատելով խեթամետ արքայի, ճնշեցին Սեխայի արքա Թարխունարադուի ապստամբությունը և Վիլուսա վերադարձրին նրա օրինական արքա Վալմուին:

Փոքր Ասիայի արևմուտքում Թուդխալիյասին հաջողվեց արմատապես փոխել ուժերի հարաբերակցությունը, որի հետևանքով Ախխիյավան դադարեց լուրջ քաղաքական գործոն լինել: Ամուրրուի արքա Սաուսգամուվայի հետ կնքված պայմանագրի տեքստը արտացոլում է XIII դարի 30-20-ական թվականներին Մերձավոր Արևելքում ստեղծված քաղաքական իրավիճակը:

Թուդխալիյաս IV-ի հաջորդների օրոք կրկին սկիզբ են առնում անջատողական միտումները: Առնուվանդաս III-ի կարճատև կառավարումից հետո իշխանության եկած Սուպպիլուլիումաս II-ը կանգնեց նույն խնդիրների առջև ինչ ժամանակին Թուդխալիյասը: Այս արքայի նորահայտ արձանագրությունը (Sudburg) վկայում է հարավային և արևմտյան Փոքր Ասիայում տեղ գտած մի շարք ապստամբությունների մասին (Թարխունտասսա, Վիյանավանդա, Մասա, Լուկկա, Իկունա և Տամինա երկրներ): Տերության ներսում տիրող անհանգիստ մթնոլորտը բարդանում էր էգեիդայից սկսված «ծովի

ժողովուրդների» տեղաշարժերով: Վերջիններիս փորձերը հաստատվելու հարավային Փոքր Ասիայի և Լևանտի ծովափնյա շրջաններում իրադրությունն ապակայունացնող լուրջ գործոն էր: Այդ շարժումների հետևանքով դադարեց արևելամիջերկրածովյան ավազանի առևտրա-արհեստագործական կենտրոնների կենսագործունեությունը, կտրվեց խեթերի համար կենսական մեծ նշանակություն ունեցող Փոքր Ասիա-Եգիպտոս հաղորդակցության ուղին, որով հացահատիկ էր ներմուծվում:

Վերոհիշյալ իրադարձությունների ընթացքում ինչ-որ մի պահ խեթական տերությունը տրոհվում է:

<u>Երրորդ բաժնում</u> («Արևմտյան Փոքր Ասիան. Տրոյական պատերազմը») քննարկվում են անտիկ ավանդության մեջ «Տրոյական պատերազմ» կոչվող պատմական իրադարձության հետ առնչվող խնդիրները: Այս տարածաշրջանի ուսումնասիրության կարևորությունը պայմանավորված է դրա աշխարհագրական յուրահատուկ դիրքով երեք քաղաքական-մշակութային աշխարհների՝ խեթական տերության, միկենյան քաղաքակրթության և Հյուսիսային Բալկանների սահմանային գոտում: Ներկայացվում են արևմտյան Փոքր Ասիային առնչվող խեթական աղբյուրների նյութերը, քննարկվում է Ախխիյավա տերմինի քաղաքական-մշակութային բովանդակության խնդիրը: Գրավոր և հնագիտական աղբյուրների համատեղ ուսումնասիրության հիման վրա նոր փաստարկներով հիմնավորվում է վերջին շրջանում մասնագիտական գրականության մեջ սասանված այն տեսակետը, ըստ որի «Ախխիյավան» միկենյան աշխարհի տարածքում գոյություն ունեցած ինչ-որ քաղաքական միավոր պիտի լիներ (հոմերոսյան Միկենքի նախատիպը): Քննարկվում են հոմերոսյան Տրոյայի հնագիտական շերտի, դրա ավերման բնույթի և հեղինակների խնդիրները: Ըստ հեղինակի, միկենյան հույները կարող էին

անմիջականորեն մասնակցել միայն Տրոյա VIh-ի ավերմանը (XIII դարի կեսեր): Ինչ վերաբերում է Տրոյայի հաջորդ VIIa շերտին (XIII դարի վերջին քառորդ), ապա դրա ավերումը չէր կարող առնչվել միկենյան հույների տեղաշարժերին. վերջինս ակնհայտորեն Հյուսիսային Բալկաններից Փոքր Ասիա ընթացած սահմանափակ բնույթի էթնիկական տեղաշարժի արդյունք պիտի լիներ:

<u>Չորրորդ բաժնում</u> («Միկենյան աշխարհը մ.թ.ա. XIII դարում») ներկայացվում է մայրցամաքային Հունաստանի և Էգեյան ծովի կղզիներում տիրող քաղաքական-մշակութային իրավիճակը այս քաղաքակրթության անկմանը նախորդող ժամանակաշրջանում: Այդ փուլի գլխավոր առանձնահատկություններն էին՝ քաղաքական միասնության բացակայությունը, գերկենտրոնացված տնտեսավարման համակարգի փլուզումը արտաքին քաղաքական ասպարեզում և միջազգային առևտրում ունեցած անհաջողությունների պատճառով:

<u>Հինգերորդ բաժնում</u> («Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XIII դարում») ուսումնասիրվում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան շրջանների քաղաքական միավորների պատմության հարցերը, դրանց փոխհարաբերությունները երկու հզոր հարևանների՝ խեթական տերության և Ասորեստանի հետ:

Մ.թ.ա. XIII դարի կեսերին Վերին Եփրատի ավազանի երկրների արտաքին քաղաքական կողմնորոշման ասպարեզում նկատվում են անջատողական միտումներ: Արդեն Թուդխալիյաս IV-ի օրոք Հայասա-Ազզին, հավանաբար, դուրս էր եկել Խաթթիի վերահսկողությունից: Նման դիրքորոշում է նկատվում նաև Իսուվայի և Խաթթիի փոխհարաբերություններում: 1230-ական թվականներին, խեթա-ասորեստանյան հակամարտության

բարձրակետի շրջանում (Նիխրիյայի ճակատամարտը) Իսուվան չեզոք դիրք է բռնում, որի հետևանքով Ասորեստանին հաջողվում է վերահսկողություն հաստատել տարածաշրջանի մի շարք քաղաքական միավորների նկատմամբ:

ԳԼՈՒԽ II

«ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ»:

Երկրորդ գլուխը բաղկացած է չորս բաժիններից և եզրակացություններից:

Առաջին բաժնում («Ճգնաժամի բնորոշումը») ներկայացվում է հին մերձավորարևելյան հասարակությունների պատմության ընթացքում վկայված վերընթաց և վայրընթաց զարգացման համեմատական աղյուսակը: Այն թույլ է տալիս եզրակացնելու, որ բրոնզեդարյան փուլում (մ.թ.ա. III-II հազ.) հինարևելյան և էգեյան քաղաքակրթությունները պարբերաբար ապրել են համաժամանակյա ճգնաժամային փուլեր, որոնց բնորոշ առանձնահատկությունը գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգի անկումն էր ու բնակչության շարժունակության աճը: Առանձին քննարկվում են նման ճգնաժամային փուլերի հնարավոր պատճառները (ներքին, արտաքին/միգրացիոն և բնակլիմայական գործոններ): Դրանց թվում առաջնությունը տրվում է ներքինին, որպես հիմնական քայքայիչ գործոնի:

Երկրորդ բաժնում («Էթնիկական տեղաշարժերը») քննարկվում են մ.թ.ա. XIII դարի վերջերին - XII դարում Մերձավոր Արևելքում և էգեիդայում գրավոր և հնագիտական աղբյուրներով վկայված և ճգնաժամի հասունացման գլխավոր հետևանքներից

մեկը հանդիսացող էթնիկական տեղաշարժերը:

«Ծովի ժողովուրդների» տեղաշարժերին նվիրված ենթաբաժնում ներկայացվում է հիմնականում էգեյան ծովի ավազանից սկիզբ առած և արևելամիջերկրածովյան տարածաշրջանի հասարակությունների զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեցած այս երևույթը: «Ծովի ժողովուրդների» շարժումները հետևանք էին միկենյան աշխարհում ընթացող ճգնաժամային պրոցեսների: Դատելով փոքրասիական-լևանտյան ծովափնյա շրջանների մի քանի տասնյակ բնակավայրերում «ծովի ժողովուրդների» ներկայությունը հաստատող հնագիտական նյութերից, կարելի է ենթադրել, որ միայն առանձին դեպքերում է եկվորների մուտքը հանգեցրել տեղական մշակույթի կենսագործունեության ընդհատմանը (օրինակ, Կիտիոնը և Սալամիսը՝ Կիպրոսում, Տարսուսը՝ Դաշտային Կիլիկիայում և այլն): Բնակավայրերի մեծ մասում շարունակվել են ուշբրոնզեդարյան մշակութային ավանդույթները: Վաղերկաթեդարյան մշակույթը բնութագրվում է տեղական և նորամուտ բնակչությունների խաղաղ համագոյակցությամբ:

Այստեղ ներկայացվում են նաև Հյուսիսային Բալկաններից դեպի Փոքր Ասիա ընթացած տեղաշարժերը: Նորագույն հնագիտական ուսումնասիրությունների լույսի տակ վերանայվում է մինչև վերջին ժամանակները մասնագիտական գրականության մեջ գերիշխող այն տեսակետը, ըստ որի մ.թ.ա. XII դարի սկզբներին հյուսիսբալկանյան բարբարոս ցեղերի զանգվածային տեղաշարժի հետևանքով կործանվել են Խեթական տերությունը և փոքրասիական մյուս պետությունները: Փոքր Ասիայի տարբեր շրջաններից ի հայտ եկած նոր նյութերը թույլ են տալիս առաջարկելու քննարկվող տեղաշարժերի մասշտաբների և ազդեցության չափերի վերաբերյալ հետևյալ տեսակետը:

Հյուսիսբալկանյան տարրի մուտքը Փոքր Ասիա կարելի է բնութագրել ոչ որպես միաժամանակյա լայն և ավերիչ շարժում, այլ տասնամյակներ տևած աստիճանական ներթափանցում, հիմնականում՝ խաղաղ եղանակով: Դրա ընդգրկած տարածքը համեմատաբար փոքր է եղել, և սահմանափակվել է Տրոադայով, Սանգարիոսի հովտով ու Հալիսի արևմտյան հոսանքին հարող շրջաններով: Հիմքեր կան ենթադրելու, որ եկվոր տարրը որոշ դեպքերում հաստատվել է Փոքր Ասիայում ընթացող ճգնաժամային երևույթների ներգործության հետևանքով բնակաթափ եղած վայրերում (օրինակ, Գորդիոնը՝ Փռյուգիայում): Նախկինում գերիշխող կարծիքը Վերին Եփրատի ավազանում ի դեմս մուշկերի հյուսիսբալկանյան վերաբնակիչներ տեսնելու մասին, որևէ փաստական հիմք չունի: Կենտրոնական Փոքր Ասիայի խեթական քաղաքների կենսագործունեության անկումը որևէ կերպ չի առնչվում բալկանյան ժողովուրդների շարժումների հետ:

Նախկինում միկենյան կենտրոնների անկումը դորիացիների հարձակումներով բացատրելու մասին տեսակետը նույնպես հակասում է առաջինների կենսագործունեության անկման պրոցեսի՝ հնագիտորեն վերականգնվող պատկերին: Հյուսիսային և Միջին Հունաստանի որոշ շրջաններից ընթացած տեղաշարժերը տեղ են գտել միայն միկենյան քաղաքների անկումից և բնակչության լայնամասշտաբ արտագաղթից հետո:

Արամեական ցեղերի շարժումները դեպի Հյուսիսային Սիրիա և Հյուսիսային Միջագետք սկիզբ են առել դեռ մ.թ.ա. XIII դարի սկզբներից: Դարավերջին և XII դարում արամեացիների հոսքը այս ուղղությամբ մեծ չափեր է ընդգրկում: Արամեական ցեղերի մուտքը նախկին Միտաննի-Խանիգալբատ և Ասորեստանի հյուսիս-արևմտյան շրջաններ տեղի է ունեցել աստիճանական ինֆիլտրացիայի եղանակով, որին զգալիորեն նպաստեց

վերոհիշյալ տարածքներում Խեթական տերության տրոհման և Ասորեստանի թուլացման փուլում տիրող քաղաքական վակուումը: Արամեացիների շարժումների հետևանքով պիտի խորանար Ասորեստանում Թուկուլթի-Նինուրտա I-ի կառավարման վերջից սկսված ներքաղաքական և տնտեսական ճգնաժամը, քանի որ եկվոր տարրը բնակություն հաստատեց Ասորեստանի հյուսիսի հումքի աղբյուրներին և արևմուտքի առևտրական կենտրոններին հարող տարածքներում:

<u>Երրորդ բաժնում</u> («Խեթական տերության անկումը») քննարկվում են Խաթթիի անկման խնդրի վերաբերյալ գոյություն ունեցող տեսությունները, քննարկվում է դրանում տարբեր քայքայիչ գործոնների խաղացած դերը:

<u>Չորրորդ բաժինը</u> («Միկենյան քաղաքակրթության անկումը») նվիրված է մայրցամաքային Հունաստանի միկենյան կենտրոնների անկման պրոցեսի ուսումնասիրմանը:

Միկենյան ճգնաժամի առաջին արտահայտությունները (արտաքին առևտրի անկում, ներքաղաքական անկայունություն) առկա էին արդեն XIII դարի կեսերից: Ճգնաժամի խորացումը պիտի կապված լիներ առաջին հերթին գերկենտրոնացված պալատական խոշոր տնտեսությունների քայքայման և արտաքին աշխարհից ստացվող եկամուտների կրճատման, իսկ որոշ դեպքերում նաև վերացման հետ: Հիմնավորվում է մի տեսակետ, ըստ որի արտաքին առևտրի անկումը հետևանք էր Թուդխալիյաս IV-ի արևմտափոքրասիական քաղաքականության և, հատկապես, միկենյան կենտրոնների նկատմամբ կիրառության մեջ դրված տնտեսական շրջափակման («Սաուսգամուվայի պայմանագիրը»): Մ.թ.ա. XII դարի սկզբներին ճգնաժամի հետագա խորացումը հանգեցրեց միկենյան կենտրոնների քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային դեգրադացիային: Տասնամյակներ տևած ճգնաժամային երևույթների ներգործության արդյունքում

Պելոպոննեսի բազմաթիվ ուշբրոնզեդարյան քաղաքներ և մանր բնակավայրեր աստիճանաբար բնակաթափ եղան: Զանգվածային արտագաղթը դեպի Մերձավոր Արևելք, Էգեյան ծովի կղզիներ, Կրետե և արևմտյան Միջերկրական մ.թ.ա. XII դարի առաջին կեսի ընթացքում ամայացրեց Պելոպոննեսի մի զգալի մասը (օրինակ, Մեսսենիայից ապաբնակեցման արդյունքում հեռացավ բնակչության շուրջ 90 տոկոսը): Առաջարկվում է միկենյան քաղաքակրթության աստիճանական անկման սխեմա, որը հանգում է հետևյալին: Ճգնաժամի առաջին փուլում սկսվում է երկրագործական բնակչության մի մասի հեռացումը, մյուս մասի կենտրոնացումը որոշ բնակավայրերում: Հաջորդ փուլը վերջիններիս բնակչության արտագաղթն էր: Երկու փուլերի ընթացքում մշտապես պիտի տեղի ունենային բախումներ տարբեր կենտրոնների միջև:

ԳԼՈՒԽ III

«ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ Մ.Թ.Ա. XII-XI ԴԱՐԵՐՈՒՄ»:

Ատենախոսության այս գլխում ուսումնասիրվում են մերձավորարևելյան ճգնաժամի բարձրակետին անմիջականորեն հաջորդող ժամանակաշրջանի պատմության խնդիրները: Այս դարաշրջանը բնութագրվում է քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային վայրընթաց զարգացման միտումով: Սակայն, չնայած այդ հանգամանքին, մերձավորարևելյան և էգեյան տարածաշրջաններում պարզորոշ նկատվում է քաղաքական և մշակութային ժառանգականություն: Մի շարք շրջաններում, ճգնաժամային փուլի քայքայիչ գործոնների հետևանքով անկման հասած քաղաքական միավորների որոշ

մասերում շարունակում են գոյատևել կամ կարճ ժամանակում ձևավորվում են նոր պետականություններ (օրինակ, հարավ-արևելյան և արևելյան Փոքր Ասիա, Պաղեստին, Էգեյան ծովի մի շարք կղզիներ և այլն):

Առաջին բաժնում («Ետխեթական պետականության ձևավորումը») ուսումնասիրվում են Խեթական տերության տրոհումից հետո նրա տարածքի մի մասում գոյատևած քաղաքական միավորների կազմավորման և վաղ շրջանի պատմության խնդիրները:

Ետխեթական-լուվիական պետությունների պատմության սկզբնական փուլի վերաբերյալ մինչև վերջին տարիները գոյություն ունեցող պատկերացումների համաձայն, դրանք եղել են ընդամենը Խաթթիի անկումից հետո՝ էթնիկական տեղաշարժերի շրջանում գոյատևած խեթա-լուվիական փոքր անկլավներ: Սակայն մի շարք նորահայտ սկզբնաղբյուրների և XII դարի ճգնաժամի համալիր ուսումնասիրության շնորհիվ այսօր կարելի է վստահորեն խոսել այն մասին, որ Խեթական տերության տրոհումից հետո դրա տարածքի տարբեր մասերում, առանց ընդմիջման շարունակվել են քաղաքական ավանդույթները:

Հյուսիսային Սիրիայի զգալի մասը խեթական պետականության անկումից հետո շարունակել է մնալ Կարգամիսի թագավորության կազմում: Այս մասին կարելի է եզրակացնել ինչպես XII դարի առաջին տասնամյակներում կառավարած «մեծ արքա» Կուցի-Թեշուբի նորահայտ կնիքի, այնպես էլ ավելի ուշ շրջանի կարգամիսյան մի շարք հիերոգլիֆային արձանագրությունների հիման վրա: Դատելով վեջիններից, X-IX դարերում տեղական և ասորեստանյան աղբյուրներից հայտնի լուվիական մի շարք պետություններ նախապես գտնվել են Կարգամիսի կազմում (Գուրգում, Թիլ-Բարսիպ, Կումմուխ, Ունքի-Պատտին և այլն): Կարգամիսի

քաղաքական մեծ հեղինակության վկայությունը արևելյան Փոքր Ասիայի մեկ այլ լուվիական պետության՝ Մելիդի առաջին դինաստիայի կապն է Կարգամիսի դինաստիայի հետ. Մելիդում հիշել են Կուցի-Թեշուբի սերունդները (XII-XI դարեր):

Արևելյան Փոքր Ասիայում՝ Վերին Եփրատից արևմուտք գտնվող նախկին խեթական Մալդիա և Թա/եգարամա քաղաքների շրջանում XII դարի սկզբներին ձևավորված Մելիդը իր պատմության սկզբնական փուլում պիտի որոշակի կախում ունենար Կարգամիսից: Արդեն XII դարի կեսերից Մելիդը լայն նվաճողական ձեռնարկումներ է կատարում արևմուտքում: Արքա Ռունտիյասի և նրա հաջորդների օրոք Մելիդի տիրապետության տակ են անցնում ժամանակակից էլբիստան քաղաքի շրջանը, ինչպես նաև ավելի արևմուտք ընկած տարածքները՝ ընդհուպ մինչև այսօրվա էրջիյաս լեռը (անտիկ աղբյուրների Արգեոսը):

Եոխեթական երրորդ պետությունը՝ Թարխունտասսան (կամ «Խարտապուսի պետությունը»), որը ստեղծվել էր դեռ խեթական արքա Խաթթուսիլիս III-ի կողմից, զբաղեցնում էր հարավային Փոքր Ասիայի մի մասը՝ «Ստորին երկիրը» (ծամանակակից Կոնյայի հարթավայրը) և դրանից արևելք ընկած մի շարք շրջաններ: Այստեղից հայտնի հիերոգլիֆային լուվիական արձանագրությունները կազմված են «մեծ արքա» Խարտապուսի կողմից: Խեթական արքաների տիտղոսը և Թարխունտասսայի դինաստիայի սերումը Մուվատալլիս II-ից թույլ են տալիս ենթադրելու, որ Խաթթուսասի անկումից ու կենտրոնական Փոքր Ասիայի ապաբնակեցումից հետո Հալիսից հարավ և հարավ-արևմուտք ընկած շրջաններում գոյատևել է մի խոշոր քաղաքական միավոր՝ Խաթթիի ժառանգորդներից ևս մեկը:

<u>Երկրորդ բաժինը</u> («Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XII-XI դարերում») նվիրված է մերձավորարևելյան ճգնաժամի փուլում Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան

շրջանների քաղաքական միավորների պատմության խնդիրների ուսումնասիրությանը:

Մ.թ.ա. XIII դարի վերջին տասնամյակների ընթացքում Խաթթիի և Ասորեստանի արտաքին քաղաքական հետաքրքրությունների կիզակետում հայտնված վերինեփրատյան երկրների հետագա պատմության որոշ խնդիրներ ընդհանուր գծերով վերականգնվում են վերջին տասնամյակում այս շրջանում կատարված հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ: Դրանք վկայում են XII դարի կեսերին Իսուվայի (հին հայկական Ծոփք) բնակավայրերի ուշբրոնզեդարյան մշակույթի վերացման և արմատապես նոր հատկանիշներով բնութագրվող նոր մշակույթի հայտնվելու օգտին: Իսուվայի վաղ երկաթեդարյան մշակույթն իր զուգահեռներն ունի Հայկական լեռնաշխարհի շատ վայրերում (Դիլկայա Հյոյուք՝ Վանա լճի հարավ-արևելյան ափին, Տիլլե Հյոյուք՝ Աղրյամանի մոտ, Գյուզելովա և Պուլուր՝ Էրզրումի մոտ և այլն), հատկապես «Թռեղքյան» մշակութային արեալում: Սրա կրողները, անկասկած, սեպագիր աղբյուրների մուշկերն են: Պայմանականորեն, «մուշկական» կոչվող այս մշակույթը որևէ առնչություն չունի հյուսիսբալկանյան տեղաշարժերին մասնակցած և հյուսիս-արևմտյան ու արևմտակենտրոնական Փոքր Ասիայում հաստատված էթնիկական խմբերի մշակույթի հետ: Իսուվայում XII դարում հայտնված մշակույթի տեղական աղբյուրը վկայում է հօգուտ այն ենթադրության, որ գրավոր աղբյուրների մուշկերը հանդիսացել են Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան մշակույթի կրողները:

Ինչ վերաբերում է մուշկերի մինչտեղաշարժային տեղադրությանը, ապա մի շարք նկատառումներ մատնանշում են Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան հատվածը, որտեղ դեռ XIII դարում խեթական աղբյուրները հիշատակում էին Հայասան: Այստեղ մուշկերի գոյության վկայություն պիտի

համարել ավելի ուշ շրջանի աղբյուրներում հիշատակվող Աքեմենյան XIX սատրապության մոսխերի առկայությունը, ինչպես նաև «Մոսխական լեռների» նույնացումը Պարխարի լեռների հետ: Պատահական չէ, որ Թիգլաթպալասար I-ի տեքստերում մուշկերի հետ միասին նույն տարածքում հիշատակվում են կասկերը, որոնց խեթական աղբյուրները տեղադրում են Հայասայի հարևանությամբ: Այսպիսով, լուրջ հիմքեր կան քննարկվող մուշկերին մերձպոնտական մոսխերի հետ նույնացնելու, իսկ վերջիններիս հնդեվրոպական ծագում վերագրելու օգտին: Մասնագիտական գրականության մեջ մուշկ-մոսխերի քարթվելական պատկանելության մասին առկա տեսակետը բացառապես հենվում է շատ ավելի ուշ ժամանակների իրողությունների վրա: Մուշկերի՝ գրավոր և հնագիտական աղբյուրներով վերականգնվող լայն արեալը, ինչպես նաև մուշկ հիմքով կազմված մի շարք երկրանունների առկայությունը (Սուշկի-Մեծ Փոյուգիա, Միսիա՝ Տրոադայում, Մեզիա Հյուսիսային Բալկաններում) հնարավոր չէ բացատրել այս տարածքներում քարթվելական էթնիկական տարրի առկայությամբ: Սակայն վերը նշված շրջաններում հնդեվրոպական բնակչության գոյությունը կասկած չի հարուցում:

Մուշկերի ցեղանվան և դրա հետ կապվող վերինեփրատյան տարածքի վաղ երկաթեդարյան մշակույթի լայն տարածումը Հայկական լեռնաշխարհում վկայում է հօգուտ այն ենթադրության, որ այս անվան տակ պիտի ենթադրել ոչ թե մի կոմպակտ էթնոմշակութային զանգված (առավել ևս ոչ քաղաքական միավոր), այլ մշակութային առումով միմյանց մոտ կանգնած շարժունակ և էթնիկապես խմբեր:

ԳԼՈՒԽ IV

«ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԾԳՆԱԺԱՄԸ. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱԿՆԱՐԿ»

Այս գլխում ի մի են բերվում XII դարի ծգնաժամի փուլում ընթացած այն բոլոր երևույթները, որոնցով բնութագրվում է ուշբրոնզեդարյան հասարակությունների աստիճանական անկումը և նոր էթնոքաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային իրողությունների ձևավորումը:

Առաջին բաժնում քննարկվում է մերձավորարևելյան տարբեր տարածաշրջանների (պայմանականորեն «ծգնաժամային գոտիներ») միջև եղած փոխազդեցությունների բնույթը՝ Փոքր Ասիա - միկենյան աշխարհ, Փոքր Ասիա - Հյուսիսային Բալկաններ, Փոքր Ասիա - Սիրիա, Փոքր Ասիա - Հայկական լեռնաշխարհ:

Երկրորդ բաժնում ուսումնասիրվում է ծգնաժամի սկզբնավորման խնդիրը: Ցույց է տրվում, որ Խեթական տերության անկման գլխավոր պատճառը պետության քաղաքական կառույցի խարխլումն էր, որը դեռ XIII դարի կեսերին հանգեցրեց փաստացի տրոհման ի դեմս հարավային Փոքր Ասիայում ստեղծված և Խաթթուսասի արքայական դինաստիայի մի ճյուղավորման կողմից կառավարվող Թարխունտասսայի թագավորության: Խեթական վերջին երեք արքաների՝ Թուդխալիյաս IV-ի, Առնուվանդաս III-ի և Սուպպիլուլիումաս II-ի օրոք Խաթթուսասի և Թարխունտասսայի հակամարտությունը վերածվել էր Տերության ներսում քաղաքական անկայունությունը խթանող լուրջ գործոնի: Զգալիորեն դրանով էր պայմանավորված Խաթթիից կախյալ ծայրամասային երկրների լոյալության նվազումը:

Ներքաղաքական անկայունությամբ և եկամտաբեր

արտաքին առևտրի անկումով էր հիմնականում պայմանավորված միկենյան կենտրոնների վայրէջքը: Սահմանափակ նյութական միջոցներ ունեցող միկենյան քաղաք-պետությունների կենսագործունեությունը պիտի ծանր հարված ստանար Փոքր Ասիայի և արևելամիջերկրածովյան քաղաքների հետ նախկինում ունեցած աշխույժ առևտրական կապերի վերացումով, որը հետևանք էր Թուդխալիյաս IV-ի կողմից Ախխիյավայի քաղաքական և տնտեսական շրջափակման:

<u>Երրորդ բաժնում</u> քննարկվում է ճգնաժամի առավել բնորոշ երևույթներից բնակչության շարժունակության խնդիրը (էթնիկական տեղաշարժերը կամ միգրացիաները): Վերջինս դիտվում է երկմիասնության մեջ՝ 1) ճգնաժամի հետևանք և 2) ճգնաժամի հարուցիչ: Աշխատության մեջ քննարկված տարբեր միգրացիաների համեմատական ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությունների.

1) Միգրացիաներն ընթացել են ոչ թե դեպի ճգնաժամային գոտիների միջուկ, այլ ընդհակառակը՝ միջուկից ծայրագավառ: Այսինքն, տեղաշարժվողները ճգնաժամից տուժած տարածքների բնակիչներն են:

2) Միգրացիաների հետևանքը ելակետային տարածքի լրիվ կամ մասնակի ապաբնակեցումն էր, որը հանգեցնում էր այնտեղ գոյություն ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային համալիրի համընդհանուր անկմանը:

3) Տեղաշարժվող ժողովուրդների և տեղական բնակչության փոխհարաբերությունները երկու բնույթի են եղել. ա) տեղական բնակչության դիմադրություն, որն ավարտվել է ավերածություններով (<u>Տրոյա VIIb1</u>, <u>Տարսուս</u>, <u>Կիտիոն</u>, <u>Սալամիս</u> և այլն), բ) խաղաղ ներթափանցում՝ երկու մշակույթների կրողների խաղաղ համագոյակցություն (Պաղեստինի բնակավայրերի մի մասը, արամեացիները՝ Հյուսիսային Միջագետքում, մուշկերը,

կասկերը և ուրումները՝ Ալզիում, Իսուվայում և Կաղմուխիում):

Բացի խոշոր տարածքներ ընդգրկող միգրացիաներից, ընթացել են նաև մեծ թվով տեղական նշանակության տեղաշարժեր նույն քաղաքական միավորի սահմաններում (Հռոդոս, Կիպրոս): Միգրացիաները հիմնականում չի կարելի բնորոշել որպես միաժամանակյա ավերիչ շարժումներ, որոնց հետևանքը ուշբրոնզեդարյան պետությունների ոչնչացումն էր: Դրանք տևել են տասնամյակներ («ծովի ժողովուրդներ», արամեացիներ, մուշկեր) և կարող են բնորոշվել որպես աստիճանական ներթափանցում:

<u>Չորրորդ բաժնում</u> քննվում է ճգնաժամի կարևոր հետևանքներից մեկը՝ քաղաքային մշակույթի անկումը: Այս պրոցեսն ընթացել է երկու եղանակով. 1) բնակավայրերի մասնակի լքում, երբ նախկին քաղաքային կենտրոնների տեղում վաղ երկաթեդարյան շերտում առկա են նոսր բնակչությամբ գյուղատիպ բնակավայրեր (օրինակ, <u>Միկենքը</u>, <u>Տիրինթոսը</u> XII դարի կեսերին, <u>Տրոյա VIIb2-ը</u>, <u>Յասսրիյուք-Գորդիոնի 7B</u> շերտը, Խաթթուսասի ետխեթական շերտերը՝ <u>Բյույուքկալա</u> և <u>Բյույուքկալե</u>, <u>Նորշունթեփեն</u> և <u>Կորուջուքթեփեն</u>՝ Իսուվայում և այլն); 2) բնակավայրերի լիակատար լքում (Պելոպոննեսի տասնյակ խոշոր և մանր բնակավայրեր, <u>Ալաջահյուք-Արինանա</u>՝ Փոքր Ասիայում, <u>Ուգարիտը</u> և այլն):

Քաղաքային մշակույթի անկումը համատարած բնույթ չի կրել: Բազմաթիվ բնակավայրեր շարունակել են կենսագործունեությունը: Միաժամանակ, տեղաշարժերի հետևանքով քաղաքային մշակույթի ծանրության կենտրոնը տեղափոխվել է նոր վայրեր. ուշբրոնզեդարյան առաջատար կենտրոնների կենսագործունեության անկմանը զուգընթաց կամ քիչ ավելի ուշ առաջ են գալիս մեծ թվով նոր, սակայն ավելի փոքր կենտրոններ: Որոշակիորեն կարելի է խոսել կենտրոն-

ծայրագավառ հարաբերությունների փոխակերպման մասին. առաջինների կենսագործունեության լրիվ կամ մասնակի անկումը ուղեկցվել է երկրորդների վերընթաց զարգացումով որոշ ընդմիջումից հետո:

Հինգերորդ բաժնում ընդհանրացվում են մերձավորարևելյան ճգնաժամի քաղաքական, էթնիկական և սոցիալ-տնտեսական հետևանքները: Ճգնաժամի ընթացքում պատմության ասպարեզից հեռացան Փոքր Ասիայի, Հարավային Բալկանների և այլ շրջանների բազմաթիվ խոշոր և մանր պետություններ (Խաթթի, Վիլուսա, արևմտյան Փոքր Ասիայի երկրներ, մի շարք միկենյան կենտրոններ, Ուգարիտ, Ամուրրու, Իսուվա և այլն):

Բնակչության տեղաշարժերի հետևանքով նկատելիորեն փոփոխվում է Մերձավոր Արևելքի էթնիկական քարտեզը: Պետությունների քաղաքական կառույցի անկումը ուղեկցվում էր ներտարածաշրջանային սոցիալ-տնտեսական համակարգի փլուզումով: Խոշոր պետությունների գոյությամբ պայմանավորված և կենտրոնական վարչակազմի կողմից ուղղահայաց սկզբունքով գործող տնտեսական և սոցիալական կառույցի տրոհումը հանգեցրեց վերևից կանոնավորվող գործոնի վերացմանը, որի անմիջական հետևանքը արտադրություն-սպառում, արտադրող-սպառող կապերի սասանումն էր: Աստիճանաբար փոխվում է հասարակությունների սոցիալական կազմակերպման բնույթը: Երկար ժամանակով վերանում է ուշբրոնզեդարի վերջերին գոյություն ունեցող միջտարածաշրջանային լայն առևտուրը: Հասարակությունների սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները հատկապես ծանր անդրադարձան կենտրոնական և արևմտյան Փոքր Ասիայի, Հարավային Բալկանների, Սիրիայի արևմուտքի և վերին Եփրատյան երկրների

կենսագործունեության վրա: Դրանց հետևանքները զգացվում էին դեռ երկու-երեք դար, մինչև X-IX դարերը, երբ սկսվում է մերձավորարևելյան տարածաշրջանի համընդհանուր վերելքը, կապված քաղաքական միավորների կայունացման գործընթացի հետ:

Վերջաբանում տրվում են ատենախոսության բոլոր հիմնական եզրակացությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուշխեթական Մելիդ պետությունը (ըստ հիերոգլիֆային լուվիական աղբյուրների), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, 6, էջ.62-70.

2. The Epithet *Celestial* in Hieroglyphic Luwian Inscriptions, «Altorientalische Forschungen», Bd.XV/1, 1988, pp.114-118.

3. Էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա.XII դարում («ծովի ժողովուրդներ», մուշկեր և ուրումեացիներ), «Պատմա-բանասիրական հանդես», 1991, 1, էջ.65-78.

4) Hartapus and the Problem of Early Tabalian History (12th-10th B.C.). - In: «SULMU IV. Everyday Life in Ancient Near East. Papers Presented at the International Conference, Poznan, 19-22 September, 1989». - Poznan, pp.183-187.

5. Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII-VIII вв. до н.э. (по иероглифическим лувийским источникам). - Ереван, 1994: Изд. Гитутюн НАН РА. - 151 с.

6. Կրկին էթնիկական տեղաշարժերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1994, 1/2, էջ.247-255.

7. «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1996, 1/2, էջ.207-220.

8. Իսուվան (Ծոփքը) մ.թ.ա.XIII-XII դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, 1, էջ.177-192.

9. Խեթական տերությունը և Ախխիյավան (Տրոյական պատերազմը). - Երևան, 1997: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. - 50 էջ.

А.В.КОСЯН

БЛИЖНЕВОСТОЧНЫЙ КРИЗИС XIIВ. ДО Н.Э. И АРМЯНСКОЕ НАГОРЬЕ (РЕЗЮМЕ)

Диссертационная работа посвящена древневосточному кризису XII века до н.э., в ходе которого в течение нескольких десятилетий (конец XIII - первая половина XII века до н.э.) государства Ближнего Востока и Эгеиды либо прекратили существование, либо в их жизнедеятельности наступает продолжительный спад, отчетливо проглядывающийся во всех сферах функционирования обществ. Комплексное изучение кризиса XII века важно прежде всего в том плане, что в специальной литературе пока не существует четких критериев для осмысления фундаментальных исторических процессов, определивших развитие обществ в данную эпоху, известную в науке как переход от поздней бронзы к раннежелезному веку.

В диссертации, на основании изучения разноязычных письменных и археологических источников, а также палеоклиматологических данных, делается попытка

реконструировать весь ход ближневосточного кризиса с периода его первых симптомов (середина XIII века до н.э.) вплоть до XI-X вв. до н.э., когда наблюдается постепенное восстановление жизнедеятельности обществ. Работа имеет широкий географический охват - Малая Азия, материковая Греция, сирийско-палестинский регион, запад и юго-запад Армянского нагорья. История упомянутого региона рассмотрена поэтапно - докризисный период, период пика кризиса и послекризисный период.

Основные выводы диссертации:

1) Первые признаки древнеближневосточного кризиса проглядываются уже в середине XIII века до н.э. в Малой Азии и в микенских центрах материковой Греции. Кульминация наступает к концу столетия, что привело к распаду существующих политических, социально-экономических и культурных механизмов обществ.

2) Основные проявления кризиса:

а) Значительный рост мобильности населения целого ряда регионов («народы моря» - из Эгеиды, западного и юго-западного побережья Малой Азии, северобалканские народы, хетто-лувийцы, мушки, каски, урумейцы, еврейские племена и др.). Результатом миграций явилось передвижение центров жизнедеятельности политических единиц из метрополии в бывшие периферийные области.

б) Основная причина депопуляции позднебронзовых городов и других населенных пунктов - не внешний фактор (нашествие варварских племен из периферийных областей древневосточной ойкумены), а внутренний - разрушение политического и социально-экономического механизма государств, междоусобные войны, а также ухудшение климатических условий. Роль последнего

фактора должен был быть значительным особенно для государств Малой Азии и южных Балкан.

в) Деградация городской культуры.

3) Последствия кризиса:

а) Распад Хеттской империи на три крупные политические единицы - Каргамис в Северной Сирии, Тархунтасса в юго-восточной Малой Азии и Мелид в восточной Малой Азии. Эти государства являлись прямыми наследниками Империи. Прекращение жизнедеятельности ряда мелких периферийных малоазийских государств - Вилусы, Исувы, политических единиц долины Сангария и Равнинной Киликии, а также государств сирийского побережья - Угарита и Амурру.

б) Коренная перекройка этнической карты Ближнего Востока.

в) Разрушение социально-экономической системы эпохи поздней бронзы и некогда развитой межрегиональной торговли.

В диссертации пересмотрены некоторые важнейшие проблемы истории Армянского нагорья:

1) Во второй половине XIII века до н.э. государства верхнеевфратской долины проявляли центробежные тенденции по отношению к их сюзерену - Хеттской империи, чему во многом способствовали как ослабление авторитета хеттских царей, так и усиление хеттско-ассирийского противостояния в 50-30-х годах столетия. Практически, в последнюю четверть XIII в.до н.э. этот регион лишь фиктивно находился под юрисдикцией хеттских царей.

2) Упоминаемые в ассирийских источниках XII-IXвв. до н.э. племена мушков являлись частью носителей этнических передвижений внутри Армянского нагорья, и не были связаны с другой переселенческой волной из Северных Балкан, как это

предполагалось раньше. Исходным ареалом мушков могла быть территория у истоков Евфрата, где в хеттских текстах XV-XIII веков до н.э. упоминалась страна Хайаса-Ацци. Мушкская миграция скорее всего носила характер постепенной, в основном мирной инфильтрации.

В диссертационной работе исследовано множество частных вопросов истории древнего Ближнего Востока.

ARAM VAGHARSHAK KOSSIAN
THE XII CENTURY B.C. NEAR EASTERN CRISIS AND THE ARMENIAN HIGHLAND